

### 3. ՓՈՐՁՆԱԿԱՆ ՄԱՐԴԱՀԱՄԱՐ

Մարդահամարի անցկացման մեթոդաբանական, կազմակերպչական և նյութերի մեքենայական մշակման ծրագրերի ու տեխնոլոգիաների փորձարկումն իրականացվում է փորձնական մարդահամարի անցկացման միջոցով, որն ընդգրկում է երկրի բնակչության ոչ պակաս, քան մեկ տոկոսը:

2015թ. փորձնական մարդահամարն անցկացվեց մարտի 17-ից 26-ը ներառյալ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հետևյալ բնակավայրերում. Ստեփանակերտ քաղաքում՝ 3 հաշվային տեղամասով, Մարտակերտի շրջանի Հաթերք և Հաղրութի շրջանի Տոդ գյուղական համայնքներում: Փորձնական մարդահամարի վայրի ընտրությունը կատարվել էր այնպես, որ դրանում ընդգրկվի հանրապետության բնակչության շուրջ մեկ տոկոսը՝ ապահովելով քաղաքային և գյուղական բնակչության համամասնությունները: ԼՂՀ 2015թ. փորձնական մարդահամարի նախապատրաստման աշխատանքներն իրականացվել են «ԼՂՀ 2015թ. մարդահամարի նախապատրաստման, անցկացման, նյութերի մեքենայական մշակման և հրապարակման աշխատանքների ժամանակացույցի» (որպես նախագիծ հավանության է արժանացել ԼՂՀ Վիճակագրության պետական խորհրդի կողմից) համաձայն: Վերջինիս հիման վրա մշակվել է փորձնական մարդահամարի նախապատրաստման և անցկացման աշխատանքների օրացուցային պլանը: Ըստ ժամանակացույցի մշակվել է փորձնական մարդահամարի անցկացման ծրագիրը (հարցաշարը), որը ներկայացվել է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության բոլոր նախարարությունների և շահագրգիռ կազմակերպությունների քննարկմանը: Ստացված առաջարկությունների և դիտողությունների հիման վրա այն վերջնական տեսքով հաստատվել է ԼՂՀ Վիճակագրության պետական խորհրդի կողմից:

Հարցաշարի որոշ հարցերի ճշգրիտ ձևակերպման և համապատասխան վանդակում ենթադրյալ պատասխանների ճիշտ ձևակերպման համար տեղի են ունեցել քննարկումներ ՀՀ ԱՎԾ-ից հրավիրված համապատասխան մասնագետների հետ:

2015 թվականի փորձնական մարդահամարի հարցաթերթում ներառված էր համատարած դիտարկման 33, իսկ ժամանակավոր ներկա գտնվողների համար՝ 14 հարց: Մշակվել և ԼՂՀ վիճակագրության պետական խորհրդի հաստատմանն են ներկայացվել մեթոդաբանական և հրահանգչական հետևյալ փաստաթղթերը.

- ԼՂՀ 2015 թվականի փորձնական մարդահամարի ընթացքում տների (շինությունների) ցուցակների և գյուղական համայնքների ցուցակների կազմման և ընդունման մասին ցուցումները,

- Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 2015 թվականի փորձնական մարդահամարի ընթացքում քաղաքներում և խոշոր գյուղերում տների (շինությունների) ցուցակները կազմելու կարգի մասին հրահանգը,

- Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 2015 թվականի փորձնական մարդահամարի ընթացքում գյուղական համայնքներում և դրանց տարածքում գտնվող այլ բնակատեղերի ցուցակները կազմելու կարգի մասին հրահանգը,

- փորձնական մարդահամարի հաշվառման հարցաթերթը,

- Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում 2015 թվականի փորձնական մարդահամարն անցկացնելու և մարդահամարի հարցաթերթը լրացնելու կարգի մասին հրահանգը,

- մարդահամարի տեղամասի վարիչի և նրա օգնականի, քաղաքներում և գյուղական վայրերում հրահանգիչ-հսկիչի և հաշվարարների հուշատետրերը,

- ԼՂՀ ազգային վիճակագրական ծառայության շրջանային բաժիններում մարդահամարի գործերը համակարգող տարածքային կոորդինատորի պարտավորությունները,

- ձև թիվ-1 բնակբնութագիր «Բազմաբնակարան շենքերի բնակարանների (կացարանների) բնութագրի վերաբերյալ» պետական վիճակագրական դիտարկման հարցաթերթի լրացման հրահանգը,

- ցուցումներ, 1-9Կ ձևաթղթերը, ԼՂՀ ազգային վիճակագրական ծառայության շրջանային բաժիններին Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 2015 թվականի փորձնական մարդահամարն անցկացնելու կազմակերպական պլանները կազմելու կարգի մասին,

- հաշվային, հրահանգչական, մարդահամարային տեղամասերի և շրջանի ամփոփ տեղեկագրերը, ինչպես նաև հաշվառման հսկողությունն ապահովող փաստաթղթեր՝ հսկիչ թերթ, վերահսկիչ փաստաթուղթ, մարդահամարի աշխատողի վկայական, տեղեկանք այն անձանց, ում դժվար է տանը գտնել և մարդահամարային այլ ձևաթղթեր,

- հրահանգ՝ մարդահամարի նյութերի ծածկագրման կարգի մասին,

- հրահանգ՝ մարդահամարի հարցաթերթի տվյալների մուտքագրման մասին:

Բոլոր փաստաթղթերը քննարկվել և համապատասխան որոշումներով հաստատվել են ԼՂՀ վիճակագրության պետական խորհրդի նորմատիվ և անհատական որոշումներով: Նորմատիվային որոշումներով հաստատված իրավական ակտերը գրանցվել են ԼՂՀ արդարադատության նախարարության կողմից և հրապարակվել:

2015թ. փորձնական մարդահամարի հարցաթերթի տեքստային պատասխանների ծածկագրման համար հիմք են ընդունվել ՀՀ 2011 թվականի մարդահամարի ժամանակ կիրառված հետևյալ դասակարգիչները՝

- երկրների անունների դասակարգիչը,
- տնտեսական գործունեության տեսակների դասակարգիչը (մաս 1-2, մաս 3),
- զբաղմունքների դասակարգիչը (մաս 1-2, մաս 3՝ պարզաբանումներ, մաս 4՝ կառուցվածքային և զբաղմունքներն ըստ այբբենական կարգի):

Մշակվել և ԼՂՀ ՎՊԽ կողմից հաստատվել է ԼՂՀ վարչատարածքային միավորների ծածկագրման ձեռնարկը /ԼՂՀ ՎՊԽ 2015 թ.-ի մարտի 19-ի թիվ 45Ա որոշում/, ինչպես նաև ԼՂՀ բնակավայրերի նախկին անվանումների ցանկը:

**Ըստ օրացուցային պլանի փորձնական մարդահամարն իրականացվում է 3 փուլերով.**

- նախապատրաստական աշխատանքներ,
- հաշվառման՝ մարդահամարի անցկացում,
- հավաքագրված նյութերի մշակում:

Փորձնական մարդահամարի նախապատրաստական աշխատանքների առաջին փուլով նախատեսված էր քաղաքների և խոշոր գյուղերի տների (շինությունների) ցուցակների կազմումը, որն անհրաժեշտ է դրանցում մարդահամարի շրջանացումն իրականացնելու համար, այսինքն՝ տարածքի բաժանումը հաշվային, հրահանգչական և մարդահամարային տեղամասերի:

Հաղորդի և Մարտակերտի շրջանների տարածքային բաժիններում ներգրավվել են մարդահամարի գործերը համակարգող տարածքային կորդինատորներ, շրջանային բաժնի պետի տեղակալի ժամանակավոր հաստիքով:

Ստեփանակերտ քաղաքում ընտրանքով որոշվել է փորձնական մարդահամարում ներգրավվել Ա. Մանուկյան փողոցի 9,11,13,15,17 և 19 շենքերը:

Մարդահամարի նախապատրաստման ընթացքում իրականացվել է նաև բազմաբնակարան շենքի բնակարանների (կացարանների) բնութագրի վերաբերյալ հարցաթերթի լրացումը, որը հիմք է հանդիսացել մարդահամարի հարցաթերթի «Տնային տնտեսության բնակարանային պայմանները» բաժնի լրացման համար: Հարցաթերթը լրացվել է սկզբնական հաշվառման տվյալների՝ տեխնիկական անձնագրերի, գույքագրման և փաստաթղթերի գրանցման գրքերի, և դրանց կից փաստաթղթերի հիման վրա:

2015 թվականի փետրվարի 10-ից մարտի 10-ը փորձնական մարդահամարի կազմակերպման և անցկացման նախապատրաստման կապակցությամբ Ստեփանակերտ

քաղաքի Ալեք Մանուկյան փողոցի թվով 6 շենքերի ցուցակագրումը կազմակերպելու համար ներգրավվել է 1 ցուցակագրող:

Միաժամանակ, հիմք ընդունելով գյուղական համայնքներում վարվող տնտեսությունների հաշվառման գրքերի գրանցումները, ԼՂՀ Մարտակերտի շրջանի Հաթերք և Հադրութի շրջանի Տոդ գյուղական համայնքներում կազմվեցին գյուղական բնակավայրերի և դրանց տարածքում գտնվող այլ բնակատեղերի ցուցակներ՝ համայնքների ղեկավարների աշխատակազմի քարտուղարների կողմից՝ կազմելով նաև դրանցում հաշվառված S/S ցուցակները: Ցուցակագրման գործառույթի ավարտից հետո իրականացվեցին Ստեփանակերտ քաղաքի ցուցակագրողից և Մարտակերտի շրջանի Հաթերք և Հադրութի շրջանի Տոդ գյուղական համայնքի ղեկավարների աշխատակազմի քարտուղարներից կազմված ցուցակների ընդունման, ստուգման և ամփոփման աշխատանքները: ԼՂՀ ԱՎԾ շրջանային բաժիններն, ամփոփելով քաղաքներում տների (շինությունների) ցուցակների և գյուղական համայնքների ցուցակների շրջանային տեղեկատվությունը, համապատասխան ամփոփագրերում ներկայացրել են Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության մարդահամարի վարչություն:

Ցուցակագրման արդյունքներով կազմվել և ԼՂՀ ԱՎԾ նախագահի հաստատմանն են ներկայացվել մարդահամարն անցկացնելու կազմակերպման պլաններն, որոնց արդյունքով ստեղծվել են 1 հրահանգչական և թվով 12 հաշվային տեղամասներ՝ համապատասխանաբար Ստեփանակերտ քաղաքում՝ 3, Տոդի գյուղական համայնքում՝ 3 և Հաթերք գյուղական համայնքում՝ 6 հաշվային և 1 հրահանգչական:

Փորձնական մարդահամարի նախապատրաստման ընթացքում բնակչության շրջանում տարվել են լայն զանգվածային-բացատրական աշխատանքներ՝ մարդահամարի նպատակների, խնդիրների, անցկացման կարգի և ժամկետների մասին, որը նպատակային դարձնելու համար կազմակերպվել են հեռուստահաղորդումներ Արցախի հանրային հեռուստատեսությամբ, տպագրվել են մարդահամարի անցկացումն ու բնակչության մասնակցությունը կարևորող և լուսաբանող պլակատներ և բուկլետներ: Հաջորդ փուլը փորձնական մարդահամարի դաշտային աշխատանքների անցկացումն էր: Մարդահամարի նախօրերին, այն է՝ մարտի 14-16-ը, հաշվարարները կատարել են տների (շինությունների) նախնական շրջագայություններ՝ ճշտելու համար իրենց հաշվային տեղամասի սահմանները՝ համեմատելով այն սխեմատիկ հատակագծի հետ: Նախնական շրջագայության ընթացքում հաշվարարները այցելել են իրենց տեղամասի մեջ մտնող բոլոր տները, համապատասխան գրանցումներ կատարել իրենց հուշատետրերում՝ ճշտելով տներում բնակչության նախնական թվաքանակը: Նրանք նաև

տեղեկացրել են բնակչությանը կայանալիք փորձնական մարդահամարի անցկացման ժամկետների մասին: 2015թ. մարտի 17-ից 26-ը ներառյալ իրականացվել է փորձնական մարդահամարի հարցաթերթերի լրացման գործընթացը: Հաշվարարներն այն լրացրել են սահմանված կարգով՝ այցելելով յուրաքանչյուր տուն (շինություն), բնակչությանը բանավոր հարցում կատարելով և պատասխանները հարցաթերթում լրացնելով՝ առանց դրանց հավաստիությունն ապացուցող որևէ փաստաթուղթ պահանջելու: Մարդահամարի ավարտից հետո՝ մարտի 28-ից 30-ը, անցկացվել է ընտրանքային վերահսկիչ շրջագայություն, որի նպատակն էր ապահովել բնակչության ամբողջական ընդգրկվածությունը մարդահամարի ընթացքում: Ընտրանքը կատարել են մարդահամարի վարչության Ստեփանակերտի քաղաքային բաժնի և ԼՂՀ ԱՎԾ Հաղրութի և Մարտակերտի շրջանային բաժիններում մարդահամարի գործերը համակարգող տարածքային կորդինատորների կողմից հրահանգիչ-հսկիչի հետ միասին՝ ընդգրկելով յուրաքանչյուր հաշվային տեղամասի բնակելի շինությունների 10 տոկոսը: Բաց թողնված տնային տնտեսությունների և անձանց համար լրացվել են համապատասխան մարդահամարային փաստաթղթեր: Փորձնական մարդահամարի հաշվառման 10-օրյա ժամանակաընթացքում աշխատանքներն ընթացել են նախատեսված կարգով, տեղերում ապահովված էր անմիջական խորհրդատվական և տեխնիկական աջակցությունը, ինչպես նաև հեռահաղորդագրության միջոցով մարդահամարային տեղամասերից մարդահամարի վարչության տեղեկատվության ստացումը՝ յուրաքանչյուր օրվա ընթացքում հաշվարարների կողմից լրացված հարցաթերթերում առաջացած դժվարությունների, տեղ գտած թերությունների և ձեռնարկած միջոցառումների վերաբերյալ: Փորձնական մարդահամարի ժամանակ փորձարկվեց նաև մարդահամարի կարևորագույն փուլերից մեկը՝ նյութերի ընդունում-հանձնումը: Այն սկսվեց վերահսկիչ շրջագայությունից անմիջապես հետո: Մարդահամարի նյութերը տեղափոխվել են Ստեփանակերտ քաղաք և պահեստավորվել ԼՂՀ ԱՎԾ-ի մարդահամարի վարչության՝ այդ նպատակով հատկացված հատուկ սենյակում: 2015 թվականի ապրիլ-մայիս իրականացվել է փորձնական մարդահամարի ժամանակ հավաքագրված տեղեկատվության ծածկագրումը, ինչպես նաև հարցաթերթերում տրամաբանական կապերի ստուգումն ու ճշգրտումը: Այդ աշխատանքների կատարումը իրականացվել է մարդահամարի վարչության աշխատողների կողմից: Համապատասխան հրահանգավորումից հետո, ինչի նպատակն էր նրանց բացատրել հավաքագրված տեղեկատվության ծածկագրման և ստուգման անհրաժեշտությունն ու կարգը, ինչպես նաև այդ աշխատանքներն իրականացնելու համար դասակարգիչներից, ձեռնարկներից և մշակված հրահանգից օգտվելու կարգը: Մարդահամարի նյութերի ծածկագրման/ստուգման հրահանգը

հաստատվել է ԼՂՀ վիճակագրության պետական խորհրդի՝ 2015թ. մարտի 19-ի թիվ 46-Ա որոշման համաձայն: Ծածկագրման ենթակա էին փորձնական մարդահամարի հարցաթերթի 5-6-րդ, 10- 11-րդ, 17-րդ և 27-28-րդ հարցերի պատասխանները, ընդհանուր առմամբ՝ 7 հարց: Ծածկագրողները բոլոր հարցերի բառային պատասխանները վերածեցին թվային ծածկագրերի՝ օգտվելով համապատասխան դասակարգիչներից և ձեռնարկներից: Ծածկագրման աշխատանքները ճիշտ կազմակերպելու և որակով անցկացնելու համար մարդահամարի աշխատակիցներից նշանակվեցին համակարգողներ, ովքեր անցկացրեցին ծածկագրողների հրահանգավորումը և հսկեցին նրանց աշխատանքը: Նրանք ծածկագրողներին մանրամասն բացատրեցին հավաքագրված տեղեկատվության ծածկագրման անհրաժեշտությունն ու կարգը, ինչպես նաև այդ աշխատանքներն իրականացնելու համար դասակարգիչներից, ծածկագրման ձեռնարկներից և հրահանգից օգտվելու կարգը: Ծածկագրողների աշխատանքը ուղեկցվում էր վերահսկող և ստուգող միջոցառումներով: Մարդահամարի վարչության աշխատողների կողմից նշանակվեցին նաև ստուգող-ծածկագրողներ, որոնք իրենց հերթին ստուգում էին համակարգողների կատարած աշխատանքը: Այսպիսով, սխալ ծածկագրման հավանականությունը հասցվում էր նվազագույնի, քանի որ կատարվում էին եռակի ստուգումներ:

Փորձնական մարդահամարի կարևորագույն նպատակներից մեկը տեղեկատվության ավտոմատ մշակման բոլոր փուլերի համար գրված ծրագրերի փորձարկումն է: Այդ ծրագրերն են՝

- մուտքի,
- տվյալների բազայի տրամաբանական սխալների ուղղման,
- ելքային աղյուսակների ստացման, ինչպես նաև որոշ օժանդակ ծրագրեր: Ինչպես 2005թ. մարդահամարի ժամանակ, այնպես էլ 2015թ. փորձնական մարդահամարի տվյալների մշակման համար օգտագործվել է CSPro (Census and Survey Processing System ) ծրագրային փաթեթը՝ նախատեսված մարդահամարների և հետազոտությունների վիճակագրական մշակման համար: Ծրագիրը, որը տեղադրված է համացանցում հանրային օգտագործման համար և հեշտությամբ բեռնվում է, բաղկացած է մուտքի, խմբագրման և ելքային աղյուսակների ստացման բաղադրիչներից: Ընդ որում, այս անգամ օգտագործվել է ծրագրի կատարելագործված տարբերակը: Մուտքի ծրագրում հարցաթերթի կառուցվածքին համապատասխան ստեղծվել են չորս ձևեր (form)՝ 2-ը S/S անդամներին տրվող հարցերի մուտքի, երրորդը՝ S/S բնակության և բնակարանային պայմաններին վերաբերող հարցերի, և չորրորդ ձևը՝ գյուղատնտեսությամբ զբաղվելու ու տնային տնտեսությանը վերաբերող այլ հարցերի մուտքի համար: Մուտքագրման

աշխատանքների իրականացումը ևս կատարվել է մարդահամարի վարչության աշխատակիցների կողմից: Մուտքագրման ընթացքը տևել է 10 օր՝ մայիսի 20-ից մինչև մայիսի 30-ը: Ծրագրի շահագործման ընթացքում բացահայտվել են որոշ բացթողումներ և թերություններ, որոնք նշվել են՝ հետագայում հիմնական մարդահամարի ժամանակ դրանք ուղղելու նպատակով: Մուտքագրման ավարտից հետո ստեղծված տեղեկատվական բազայի վրա փորձարկվել է տրամաբանական սխալների ուղղման ծրագիրը, որը գրվել է CSPro ծրագրային փաթեթի խմբագրման (Batch Edit Application) միջավայրում: Փորձական մարդահամարի արդյունքներով ելքային աղյուսակների ստացման համար ընտրվեցին այն աղյուսակները, որոնք ունեին տվյալ խմբին առանձնահատուկ կառուցվածք և ստացման համար ընդհանուր մոտեցում: Աղյուսակների որոշ մասի ստացումն իրագործվել է CSPro ծրագրային փաթեթի միջոցով: